2782

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

ՈՐՈՇՈՒՄ

«1» դեկտեմբերի 1995թ. № 45/22

22 ,,Լուսխաչ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գայի պողոտայի և Սաֆարյան փողոցի հատման մասում առևտրի կենտրոնի շինարարության համար հողամաս հատկացնելու մասին /Խորհրդային շրջան/

Հաշվի առնելով ,,Լուսխաչ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 28.09.95թ.հ.602 գրությունը, Երքաղխորհրդի գործկոմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հողհատկացումների մշտական հանձնաժողովի /19.10.95թ.հ.26 արձանագրություն/ և գործադիր կոմիտեի տնօրինության տակ գտնվող հողերի անուրդային վաճառքի հանձնաժողովի /24.10.95թ.հ.22 արձանագրություն/ դրական եզրակացությունները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի հ.հ.6,14,42 հոդվածներով, ,,ՀՀ պատգամավորների քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի մասին,, ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի և Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1994թ.նոյեմբերի 4-ի հ.47/1, 1994թ.դեկտեմբերի 16-ի հ.53/15 որոշումներով՝

ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. ,,Լուսխաչ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը առևտրի կենտրոնի շինարարության համար Գայի պողոտայի և Սաֆարյան փողոցի հատման մասում հատկացնել հողամաս՝ մշտական օգտագործման իրավունքով:

2. Հատկացվող հողամասի մակերեսն է՝ 0,63 հա, նիշը՝ 953123:

3. Հանձնարարել Երքաղխորհրդի գործկոմի սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Ա.Բաբայան/՝ ,,Լուսխաչ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել պայմանագիր՝ մշտական օգտագործման իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

4. Նախազգուշացնել պատվիրատուին, որ Երքաղխորհրդի գործկոմի բոլոր կազմակերպություններ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել վերոհիշյալ նիշով:

5. Հատկացվող հողամասի սահմաններն ընդունել ըստ Երքաղխորհրդի գործկոմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծի:

6. Նախագիծն ընդունված կարգով համաձայնեցնել Երքաղխորհրդի գործկոմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ:

7. Շինարարությունը թույլատրել միայն հողամասի բնապահպանական հարցերն ապահովելուց հետո:

8. Ընդունել ի գիտություն, որ հողի հարկի գանձման հարցը լուծվում է պայմանագրով՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի:

9. Չեղյալ համարել ՀՀ առևտրի նախարարությանը հանրախանութի շինարարության համար և Սաֆարյան փողոցին հարող տարածքում հողամաս հատկացնելու վերաբերյալ Երքաղխորհրդի գործկոմի 1984թ.հունիսի 6-ի հ.15/21-4 որոշումը:

10. Նախազգուշացնել պատվիրատուին, որ մինչև 1997թ.դեկտեմբեր ամիսը շինարարական աշխատանքները չսկսելու, ինչպես նաև սույն որոշման կետերի պահանջները չկատարելու դեպքում որոշումը չեղյալ կհամարվի՝ առանց կատարված ծախսերի փոխհատուցման:

11. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երքաղխորհրդի գործկոմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության / Վ.Խոջասարյան/ վրա:

12. Որոշման կատարման հսկողությունը դնել Երքաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Ա.Մխիթարյանի վրա:

ՆԱԽԱԳԱՀ՝ Խ.ԱՍՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ղ.ՄԿՐՏՉՅԱՆ

Ժ.Խաչատրյան

ԱԳ